



Կարգապահական գործ թիվ 18107

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի օգոստոսի 11-ի թիվ 249-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/195-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր՝ թիվ 78), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

1.1. Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը.

06.06.2018թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ N 1838-18**) Վիլեն Գայֆեջյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյանի դիմումը, որում հայտնվել է, որ 03.06.2018թ. Դիմողը փաստաբան Տիգրան Աթանեսյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) ֆեյսբուքյան էջում Աթանեսյանի կողմից տեղադրված հրապարակման մեկնաբանություններում կատարել է հետևյալ գրառումը. «Հույս ունեմ ուժեղ սարկազմա...էն կարգի, որ դաժե ես՝ ՅԻՆԻԿՍ, չընկալեցի»:

Դիմողի վերոհիշյալ մեկնաբանությանը Տիգրան Աթանեսյանը պատասխանել է. «ճշմարտությունա, համեցի, իրար հեպ համոզվենք», որին Դիմողը պատասխանել է, որ «ճշմարտությունը մի բանա էս պարագայում... որ ինքը ցուցարարա ծեծել ու դրա համար պեղքա պատասխան տա...մարդկային հարկանիշները ընգնում են 5-րդ պլան...մերսի հրավերի համար, բայց մեծ հաճույքով մերժում եմ...»: Տիգրան Աթանեսյանը, նշելով Վիլեն Գայֆեջյանի անունը, պատասխանել է. «դե սիկտիր եղի, այ դիշովկա», որից հետո ջնջել է իր հրապարակումը և արգելափակել Դիմողի էջը: Դիմումում նշվել է, որ մինչև Տիգրան

Աթանեսյանի կողմից իր հրապարակումը ջնջելը Վիլեն Գայֆեջյանը կատարել է այդ հրապարակման մեկնաբանությունների սքրինշոթ:

Դիմողը հայտնել է նաև, որ 05.06.2018թ. Տիգրան Աթանեսյանը «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ուղիղ եթերի ժամանակ հաստատել է այն փաստը, որ ինքը վիրավորել և հայիոյել է Դիմողին և որոշ օգտատերերի՝ նշելով, որ «*Վիլենը թող իրեն կարգին պահի և աշոկ չհավաքի*»:

Ըստ Դիմողի, փաստաբանը թույլ է տվել փաստաբանին ոչ վայել, ավելին՝ լկտի վարքագիծ, ինչը բնականաբար հանդիսանում է Պալատի կողմից հաստատված վարքագծի կանոնների խախտում: Անվիճելի է այն փաստը, որ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, և ոչ թե հայիոյախառն արտահայտություններ շռայլի հանրության նկատմամբ (ընդ որում վերջինիս կողմից հայիոյանքներ տրվել է ոչ միայն Դիմողի, այլ նաև՝ այլ օգտատերերի հասցեին):

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանին պատասխանատվության ենթարկելու և արտոնագրից զրկելու հարցը քննարկելու նպատակով:

Գրությանը կից ներկայացվել է Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված գրառման սքրինշոթերը:

1.2. Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համառոտ բովանդակությունը.

Պալատի մամուլի խոսնակի 06.06.2018թ. զեկուցագրով ներկայացվել են հետևյալ տեղեկությունները և նյութերը՝

- «**Հրապարակ**» օրաթերթի **05.06.2018թ. N 101 (2387) համարում նշվել է՝**

«Էրեբունիում անկարգությունների գործով ձերբակալվածներն ազատ արձակվեցին, բացի մեկից: Հատկապես մեծ աղմուկ բարձրացավ Մասիսի քաղաքապետի և փոխքաղաքապետի ազատման առիթով:

Մարդկանց զայրացրել էր փաստաբան Տիգրան Աթանեսյանի գովեստը՝ ուղղված իր պաշտպանյալներին: Մեր տեղեկություններով՝ նրա և ակտիվիստների հայիոյախառն երկխոսության «սքրինշոտերը» ներկայացվել են Փաստաբանների պալատի՝ խնդրելով պարզել փաստաբանին: ...»:

Նույն տեղեկություններին անդրադարձել են նաև էլեկտրոնային լրատվամիջոցներ, մասնավորապես՝

- «Երևան Նյուզ» լրատվական կայքը <http://yn.am/?index&p=87186&l=am> ,

- Շաբաթ.am լրատվական կայքը՝ <https://shabat.am/am/article/181097/Tigran-Atanesyani-u-aktivistneri-hayhoyakharn> :

- Հայկական ժամանակ-ի armtimes.com լրատվական կայքի 05.06.2018թ.

«Մասիսի քաղաքապետի փաստաբանի դեմ դատական հայց են ներկայացնելու» վերտառությամբ հրապարակման մեջ նշվել են՝

«...Ֆեյսբուքահայության մոտ դժգոհությունների ալիք առաջացավ, եւ դրանք վերածվեցին մեկնաբանությունների, Աթանեսյանի հրապարակած լուսանկարի տակ:

Մասնավորապես, Աթանեսյանը «SOS» համացանցային հաղորդման համահեղինակ եւ հաղորդավար Վիլեն Գայֆեջյանի մեկնաբանություններից մեկին վիրավորելով էր պատասխանել:»

«Աթանեսյանը նաեւ հայիոյել էր մի շարք օգտատերերի, ովքեր դժգոհություններ էին հայտնել լուսանկարի եւ դրա հետք արված գրառման հետք կապված, բայց քանի որ հայիոյանքները էթիկայի սահմաններից դուրս էին «Հայկական ժամանակ»-ը դա չի տեղադրել:»:

Այնուհետև նույն կայքում ներկայացվել է հարցազրույցը փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետ՝

«- Պարոն Աթանեսյան, քաղաքացիները ձեր հրապարակած լուսանկարի եւ դրա հետք գրված գրառման շուրջ դժգոհություններ էին արտահայտել, դուք ոմանց շարք կոպիտ պատասխան էիք տվել, ոմանց անգամ հայիոյել էիք, ի՞նչն էր դրա պատճառը:

- Նախ հարցի ձեւակերպմանը կատեգորիկ համաձայն չեմ: Ես վստահ չեմ, որ դրանք քաղաքացիներ են, եթե դուք նկատի ունեք ֆեյք կամ անդաստիարակ մեկը, որը ինձ վիրավորում է, եւ այդ վիրավորանքին ես պատասխանում եմ, ապա շարք լավ եմ անում, որ վիրավորանքին պատասխանում եմ: Դա ֆեյքային հարձակում էր, մոտավորապես 300 ֆեյք, որոնց 80 տոկոս էջերը գրեթե միանման էին, եւ քերականական ոճը, իմաստային ոճը ինձ հուշում է, որ դա ընդհանուր միգուցե 5-ից 10 հոգու կողմից ղեկավարվող կազմակերպած հարձակում էր, որը տիպիկ բան է, բայց ես հասկանում եմ, որ հիմա այս էմոցիոնալ անցքի վրա, մարդիկ առանց հարցի էությունը հասկանալու ինձ էին թիրախավորել, որը շարք ծիծաղալու էր:..»:

Հոդվածում ներկայացվել են նաև նկարներ օգտատերերի գրառումներով (<http://www.armtimes.com/hy/article/138566>):

- Ազատություն ռադիոկայանի ֆեյսբուքյան էջում «ՖԲ ասուլիս փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետ» խորագրի ներքո ներկայացված են օգտատերերի հարցերը, որոնց կցված են նաև գրառումների արտանկարներ (սքրինշոտեր):¹

Տիգրան Աթանեսյանը ֆեյսբուքյան հարցազրույցի ժամանակ պատասխանել է Ազատություն ռադիոկայանի լրագրողի հարցերին, որոնք վերաբերում էին իր կողմից կատարված ֆեյսբուքյան գրառումներին:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 06.06.2018թ. թիվ 236-Ա/ԿԳ-18107 որոշմամբ փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ **Կանոնագրքի**) 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

¹ www.facebook.com/events/241028163319086/?active_tab=discussion

07.06.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է սքրինշոթեր և Տիգրան Աթանեսյանին իր կողմից տրված լիազորագիրը:

Խորհրդի նիստին ներկայացել են Դիմողը և Դիմողի ներկայացուցիչը: Դիմողի ներկայացուցիչը վերահաստատել է Դիմողի դիրքորոշումը՝ նշելով, որ Պատասխանողը 03.06.2018թ. Ֆեյսբուք սոցիալական կայքի միջոցով հրապարակել է իր և Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի համատեղ լուսանկարը, որը վերնագրել էր լավ մարդ, կարգին քաղաքապետ, ցավոք դեռևս մեղադրյալի կարգավիճակով, և իր ստատուսներից մեկում գովասանքի խոսքեր էր արտահայտել Մասիսի քաղաքապետի վերաբերյալ, որին Դիմողը պատասխանել էր, որ չի հավատում: Տիգրան Աթանեսյանը դրան ի պատասխան ասել է արի ծանոթացնեմ, իսկ Դիմողը ցանկություն չէր հայտնել հանդիպելու՝ նշելով, որ իր համար ցուցարար ծեծող մարդը կամ անձը ով կարող է կասկածվել ցուցարար ծեծելու մեջ իր մարդկային հատկանիշները գնում են հինգերորդ պլան: Դիմողի ներկայացուցիչը, չբարձրաձայնելով Տիգրան Աթանեսյանի պատասխանը նշեց, որ պատասխանի սքրինշոթը ներկայացված է: Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ կարևոր է նաև Պատասխանողի կողմից մյուս օգտատերերի մեկնաբանություններին տրված հայիոյախառն պատասխանները: Դրանք մոտ տասն են, որից 4-ի ապացույցները՝ սքրինշոթերը, Դիմող կողմը ներկայացրել է Պալատին: Բացի այդ, Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարում Պատասխանողն ասել է, որ հայիոյելով օգտատերերին՝ ճիշտ և տղավարի է վարվել, ինչը, ըստ Դիմողի ներկայացուցչի, հարիր չէ իրավաբանին և, առավել ևս, փաստաբանին, ինչպես նաև նշել է, որ լրատվական կայքերից մեկի հետ հեռախոսազրույցում իր նկատմամբ հարուցված սույն կարգապահական վարույթի առնչությամբ Պատասխանողն ասել է, որ թքած ունի կարգապահական վարույթների վրա, որպիսի արտահայտությունն, ըստ Դիմողի ներկայացուցչի, տարօրինակ է փաստաբանի համար:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պատասխանող Տիգրան Աթանեսյանը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի վայրի և ժամանակի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

25.06.2018թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը գտել է, որ կարգապահական գործով ձեռք բերված նյութերով հիմնավորվում է հետևյալը.

- Հրապարակային հարթակներում փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից հայհոյանքներ, այլ վիրավորական արտահայտություններ հնչեցնելու փաստը:
- Այդ կերպ վերջինս պատասխանել է, մի դեպքում՝ իր դեմ ուղղված հայհոյանքներին, իսկ Դիմող Վիլեն Գայֆեջյանին՝ պատասխանելով վերջինիս քննադատություններին:
- Ակնհայտ է, որ առնվազն Վիլեն Գայֆեջյանին ուղղված վիրավորանքների դեպքում՝ փաստաբանի կողմից վիրավորական գրառումներ կատարելու որևէ արդարացնող փաստ կարգապահական գործի նախապատրաստման փուլում ձեռք չի բերվել:
- Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ազատություն.tv-ի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդման ուսումնասիրությունից պարզ է դառնում փաստաբանի վերաբերմունքն իր կողմից կատարված վիրավորական գրառումներին և այն անձանց նկատմամբ, ում ուղղված են եղել նշված գրառումները: Ակնհայտ է, որ փաստաբանը ոչ միայն չի զրջում իր կողմից արված գրառումների համար, այլև արդարացնում է դրանք՝ նշելով, որ «պետք էր»:

Նախապատրաստողն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև նույն հաղորդման շրջանակներում փաստաբանի կողմից արված հետևյալ դիտարկմանը. *«Ինչ վերաբերվում է իմ կողմից հայհոյանքներ գրելուն կամ ինչ-որ մարդկանց պատասխանելուն՝ ես այդ պահին փաստաբան չեմ, ես սովորական քաղաքացի Տիգրան Աթանեսյանն եմ և դրա իրավունքը առավել քան ունեմ»:*

Նախապատրաստողը գտել է, որ Ֆեյսբուքյան օգտատերերի բավականին սուր քննադատությունը կապված է եղել փաստաբանի կողմից քրեական գործով իր վստահորդի շահերի պատշապանության հետ: Այդ մասին է վկայում նաև այն, որ քննադատությունները արվել են՝ Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված հետևյալ հրապարակման տակ. *«Շատ կարգին մարդ, լավ քաղաքացի, ցավոք առայժմ մեղադրյալ՝ անհիմն մեղադրանքով, Մասիսի քաղաքացի Դավիթ Հարությունյանի հետ իմ գրասենյակում»:*

Ըստ Նախապատրաստողի ակնհայտ է, որ նշված հրապարակումը կատարելիս Տիգրան Աթանեսյանը հանդես է եկել որպես փաստաբան, ուստի և հետագա մեկնաբանություններին պատասխանելիս ևս իրեն պետք է տարանջատեր հասարակ քաղաքացուց և քննադատություններին պատասխանել՝ հաշվի առնելով փաստաբանի վարքագծի կանոնները:

Վերոգրյալի հիման վրա Նախապատրաստողը եզրակացրել է, որ Պատասխանող Տիգրան Աթանեսյանի կողմից Կանոնագրքի 2.2.3 ենթակետով նախատեսված

հատկանիշների խախտման փաստը հաստատվում է կարգապահական գործում առկա ապացույցներով:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 04.07.2018թ:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ. ժամը 15:00-ին, ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբան Տիգրան Աթանեսյանը ֆեյսբուքյան իր էջում 03.06.2018թ. կատարել է հետևյալ հրապարակումը. «Շատ կարգին մարդ, լավ քաղաքացի, ցավոք, առայժմ մեղադրյալ անհիմն մեղադրանքով, Մասիսի քաղաքացի Դավիթ Համբարձումյանի հետ իմ գրասենյակում»:
- Նշված հրապարակմանը հաջորդել են մի շարք օգտատերերի մեկնաբանություններ: Մասնավորապես.

(...)

*Տիգրան Աթանեսյանը Вилен Гайфеджян օգտատիրոջ (ըստ **armtimes.com-ի հարցազրույցի քաղաքացի Վիլեն Գայֆեջյան**) հետ հետևյալ «քննարկումն» է կատարել՝*

Վիլեն Գայֆեջյան – Հույս ունեմ ուժեղ սարկազմա ... Էն կարգի, որ դաժե ԵՍ ՑԻՆԻԿՍ, չընկալեցի...

Տիգրան Աթանեսյան (Tigran Atanesyan) օգտատեր – Ճշմարտությունա, համեցի, իրար հետ համոզվենք

Վիլեն Գայֆեջյան – Ճշմարտությունը մի բանա էս պարագայում.. որ ինքը ցուցարարա ծեծել ու դրա համար պեքա պատասխան տա.. մարդկային հատկանիշները ընգնում են 5րդ պլան..մերսի հրավերի համար, բայց մեծ հաճույքով մերժում եմ...

Տիգրան Աթանեսյան (Tigran Atanesyan) օգտատեր – Vilen Gaifejian դե սիկտիր եղի, այ դիշովկա

Վիլեն Գայֆեջյան – ահահա...շատ ծիծաղելու ես))

(...)

Artur Artur օգտատեր: Տիգրան, քո պես բ...ի² տղերքին ու քո անասուն պաշտպանյալին պոռնիկ դատավորին վարելա պետք մեր երկիրը մաքրվի:

Տիգրան Աթանեսյան (Tigran Atanesyan) օգտատեր: Բ...ի³ տղա, ընտանիքիդ գերեզմաններին թքեմ:

(...)

Gigi Vardanyan օգտատիրոջ կողմից վիրավորական գրառմանը **Տիգրան Աթանեսյան** (Tigran Atanesyan) օգտատերը պատասխանել է՝ **պոռնիկը քո մերնա, այ գ...ի⁴ տղա ֆեյք, սքրինշոթ արա, թող քո նման բ...ի⁵ տղերքը տարածեն:**

(...)

Arsen Chil-gevorkian օգտատեր: Տականքներ:

Տիգրան Աթանեսյան (Tigran Atanesyan) օգտատեր: տո այ բ...ի⁶ տղա:

- Ազատություն ռադիոկայանի 05.06.2018թ. ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ⁷, հնչել են հետևյալ հարց ու պատասխանը.

Համաձայն տեսագրության՝ հաղորդավարուհի, լրագրող Նարինե Ղալեջյանի հարցին՝ Տիգրան Աթանեսյանը նշում է. «Դրանք քննադատություններ չէին: Դավիթը եկել էր իմ գրասենյակ, նստած գրուցում էինք միասին և ես իմ շատ պաշպանյալների հետ եմ նկարներ տարածել, դա իմ էջն է: Ես ազատ մարդ եմ, ես չեմ ապրում հարկատուների հաշվին: Ես ինքս եմ հարկատու, ես ոչ մեկի առջև պատասխանատու չեմ և անում եմ այն, ինչ որ ուզում եմ՝ իմ խղճի և օրենքի սահմաններում: Նորից եմ ասում՝ իմ պաշպանյալը շատ լավ մարդ է և լավ քաղաքացի: Ում դուրը կգա՝ կգա, ում դուրը չի գա՝ Աստված իրա հետ»:

Նարինե Ղալեջյան. «Անցնենք ֆեյսբուքյան հարցերին, Գեղամ Ադյանն ասում է՝ ինչու եք մարդկանց Ձեր գրառումների փակ վիրավորում, հայիոյում, այնուհետև՝ ջնջում մեկնաբանությունը: Օգտատերերից մեկն էլ՝ Գրեգ Սանյան, ասում է՝ հարցրեք Տիգրանին, ինչու է վիրավորում մարդկանց առանց պատճառի: Եթե համաձայն չէ՝ կարող է փաստարկված ձևով ներկայացնել միտքը և եթե իր հետ կամ իր պաշպանյալի հետ մեկը նման ձևով խոսեր՝ ինչպես կարծազանքեր: Էստեղ դրված են սքրինշոթեր, որոնք եթերի համար չեն: Վիլեն Գայֆեջյանը՝ Սոս հաղորդաշարի հաղորդավորը, Ձեզ գրել էր. «Հույս ունեմ ուժեղ սարկազմա... էն կարգի, որ դաժե ԵՍ Ցինիկս, չընկալեցի...» և Դուք այնտեղ ներքևում հայիոյել եք նրան: Ինչո՞ւ...»:

Փաստաբան Տիգրան Աթանեսյան. «Նախ, հարց տվողները թող իրենց Թերեզ մամի տեղ չդնեն ու բարոյականություն ու բարոյախոսություն չանեն: Իհարկե ֆեյսբուքյան ասուլիսն իրենց հնարավորություն է տալիս հարցեր ընձեռնելու, բայց

² Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

³ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

⁴ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

⁵ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

⁶ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

⁷ <https://www.youtube.com/watch?v=DO63Woo-wHs>

կներեք, կրակը չընգանք, որ Սթիվ Ջոքսը սրեղծեց սմարթֆոն կամ ով որ սրեղծեց և տվեց Ձեր ձեռքը: Պարոնայք, մի քիչ հեղուկեք Ձեր դաստիարակությանը և մնացածին: Հայտնաբերեցի եղել է ի պատասխան: Բայց քանի որ դա պրոֆեսիոնալ կազմակերպված ֆեյքային հարձակում էր, ջնջում էին իրենց հայտնաբերում էին իմ հայտնաբերումը: Հասկանո՞ւմ եք»:

Լրագրող. «Այսինքն, իրենք գրում էին, հեղուկ ջնջում էին...»:

Փաստաբան. «Ես մի քանի հոգու պատասխանեցի ըստ արժանվույն, հեղուկ հասկացա, որ 300 հոգի, որից երևի 80 տոկոսը միանման էջերով, բոլորի մոտ կամ Նիլոկի նկարն էր, կամ Հանրապետության հրապարակի նկարն էր՝ ժողովրդով, 3-4 հար ընդհանրական անհասկանալի նկար և ոչ մի քոմենթ, ոչ մի սրատու: Այսինքն՝ ֆեյքեր: Հասկացա, որ սա ֆեյքային հարձակում է, թե ով է արել...»:

Լրագրող. «Վիլենը ֆեյք չի..»:

Փաստաբան. «Վիլենը չի ֆեյք, չէ ես ասում եմ 80 տոկոսն են ֆեյք: Վիլենը թող իրեն կարգին պահի և աչոկներ կհավաքի էս պահերին (...):»:

Լրագրող. «Վիլենի գրառումը ես նայել եմ, որևէ վիրավորական բան չկա»:

Փաստաբան. «Դուք չեք տեսել ամբողջականը, որովհետև ես բլոկ եմ արել և ջնջել եմ, դա իմ էջում էր և կար հայտնաբեր: Նորից եմ ասում՝ ով կհայտնաբեր կպատասխանեի, հեղուկ հասկացա, որ սա հենց այդ միտումը ունի, որ այսօր այդ մարդիկ այս հարցը այսպես տեսան և ասեին՝ վույ աման և ինչ-որ մեկի վրա դա կազդեր: Ուրեմն, ասեմ Ձեզ, սովորական հայտնաբերում տվել եմ համարժեք պատասխան: Այնուհետև, ես 300 հոգու ֆեյքերային տիրույթի չակերտավոր քաջազուններին պատասխանելու ցանկություն չունեմ: Նորոգել եմ գնացել են, էջս էլ ձևափոխել եմ ընկերներիս և հասանելի: Ֆեյքերային հարձակումը դա հանրության, ժողովրդի արելություն չի: Դա ինչ-որ մեկի պատվերն է (...):»:

Լրագրողը հրապարակում է օգտատերերից մեկի հաջորդ հարցը. «Ինչպես կարող է իրավաբանական կրթություն ունեցող մարդը, որի աշխատանքը ենթադրում ու պարտադրում է հանդես գալ լայն հասարակության առաջ, օգտագործի նման կեղտոտ, անվայել ու սեփական անձը ցածրացնող բառապաշար»:

Փաստաբանի պատասխանը. «Հիմար հարցի չեմ պատասխանի»:

Լրագրողը հաջորդ հարցն է տալիս. «Արդյոք պրոֆեսիոնալիզմի ցուցիչ է կորցնել ինքնատիրապետությունն ու սկսել հայտնաբերում գրել»:

Փաստաբանի պատասխանը. « Անցնենք առաջ»:

Լրագրողի հարցը. « Ինչպես թքել գերեզմաններին, կա՞ այդպիսի ուղեցույց...: Սա երևի էն ամենակոպիտ գրառումներից մեկն էր, որ ինքս էլ տեսա...»:

Փաստաբանի պատասխանը. « Դե քանի որ իմ նախնիներին վիրավորեց, ես էլ իմ վերաբերմունքը ցույց տվեցի իր նախնիների նկատմամբ: Լավ չի, տղայական է մի քիչ, միգուցե պետք չէր, բայց պետք էր: Էդ մարդուն, ով որ վիրավորել էր իմ նախնիներին, ավելի վատ բան էլ կգրեի, ավելի վատ բան էլ կանեի: Սրեղ արդեն ինչ որ տղայություն չի, ես էլ ոգևորված չեմ, բայց իմ նախնիներին, իմ ծնողներին վիրավորողին կասեմ շատ ավելի վատ բաներ ու ասում եմ»:

Լրագրողի հարցը. «Լևոն Իսախանյան: Պարոն Աթանեսյան, երեկ որ

արտահայտեցի, իմ կարծիքը արտահայտեցի, որը չէր պարունակում ոչ վիրավորանք, ոչ էլ Ձեր անձը կամ գործողությունը վարկաբեկող միտք: Ինչի համար արժանացա Ձեր կողմից արգելափակման»:

Փաստաբանի պատասխանը. «Ձգիտեմ ում մասին է խոսքը և ով է հարց տվողը, չգիտեմ(...):»:

(...)

Լրագրողի հարցը. Կարեն Վարդազարյան, փաստաբանի պարտականությունների մեջ մտնում է հաճախորդի գովք անելը, դրա համար առանձին վճար կա՞:

Փաստաբան. «Կարեն Վարդազարյանը փողի կարիք ունի հա՞ երևի: Եթե փողի կարիք ունի, թող գնա դիմի փարոս : (...) Բոլոր հարցերը ունեն կլեշեներ, մեղավորներ, սրիկաներ, ժողովրդի թշնամիներ: Գիտե՞ք, էս մարդիկ ուզում են վիրավորվեն, ուզում են՝ չէ: Սրանք 37 թվականին դանոս գրածների թոռներն են հոգևոր: Ոչ ոք չի մտածում մարդու մասին, մարդ էակի մասին: Էս հեղափոխությունը հենց անարդարության դեմ էր: Իսկ այս բոլոր մարդիկ անարդարության կողմնակից են, Վինչի դատաստանի, արյան, բայց հավատացեք, եթե իրենց մի թեթև ցավացնեն, իրենք կդառնան Նիկոլական, Ռոբակյան, Սերժական, Կոմունիստ, կներեք նաև՝ իսլամստ, եթե կարիքը լինի: Հարց տվեք գրագետ, ես կոչ եմ անում օգտատերերին, հարցը տվեք առանց ենթատեքստերի: Եթե ուզում եք վիրավորեք՝ ինչու եք հարց տալիս: Վիրավորեք՝ ես Ձեզ կպատասխանեմ»: (...)

Լրագրողի հարցը. «Աննա Միրզոյան: Կինդրեի անդրադառնալ Ձեր հայտնի տիրահոջակ մեկնաբանությանը, որում վիրավորեցիք Վիլենին...»:

Փաստաբան. «Եկեք հարցը այդ անցնենք...»:

Լրագրող. «Էլի ասում է անհարիր բառապաշար է և այլն, բայց Դուք միևնույն է պնդում եք, որ տվել եք արժանի պատասխան»:

Փաստաբան. «Այո»:

(...) **Լրագրողի հերթական հարցին պատասխանում է.** «Մեր պալատի տիրահոջակ մտերցումն է, որ 24 ժամ ես փաստաբան եմ: Ոչ, ես 24 ժամ փաստաբան չեմ: Ես փաստաբան եմ, երբ որ գործում եմ որպես փաստաբան, որպես պաշտպան: Հիմա Դուք ինձ հարց եք տալիս որպես պաշտպանի, հեղափոխար պետք է տամ պատասխան, որը չի հակասում իմ պաշտպանյալի դիրքորոշմանը: Ինչ վերաբերվում է իմ կողմից հայտոյանքներ գրելուն կամ ինչ-որ մարդկանց պատասխանելուն՝ ես այդ պահին փաստաբան չեմ, ես սովորական քաղաքացի Տիգրան Աթանեսյանն եմ և դրա իրավունքը առավել քան ունեմ»:

(...)

Լրագրող. «Անդո Ավետիսյան: Ինչպես ստացվեց կամ ինչը Ձեզ ստիպեց, որ այդ աստիճան ասիերից դուրս եկաք Ձեր իսկ ֆեյսբուքյան գրառումներով... Բայց Դուք ասում եք, որ այդ 300 հոգու գրոհի՞ն ուղղակի չդիմացաք ու պոռթկացիք»:

Փաստաբան. «Ոչ թե 300 հոգու ... նախ սպառնալիքներ են հնչել իմ կնոջ հասցեին, իմ երեխաների հասցեին, իմ կյանքի և անվտանգության ...»:

Լրագրող. «Արդիւնքները պահե՞լ եք»:

Փաստաբան. «Ոչ իհարկե, դրանք ֆեյքեր են: Եթե մեջները մարդ կա, որ ինչ որ իրան համարել ա մարդ, իմ երեխաների նկարների տակ եթե մարդ հայտոյանք է

գրում, 5 փարեկան փղայիս նկարի փակ հայիոյանք է գրում, ովքեր որ ինձ այդ ձևով քննադատել են, բոլորը ունեն այդ մարդու բարոյական նկարագիրը (...)»:
(...) **Լրագրողի հերթական հարցին Փաստաբանը պատասխանում է. Դա անձնական խնդիր է ու ոչ մեկի շան գործը չէ ես ինչ պարտքեր ունեմ...**:

Նշված փաստերը հաստատվում են մասնավորապես Դիմողի դիմումով, ֆեյսբուքյան սքրինշոթերով, Երևան նյուզ⁸, shabat.am⁹, armtimes.com էլեկտրոնային լրատվամիջոցներում 05.06.2018թ. կատարված հրապարակումներով, «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարի տեսանյութով, դիմող կողմի բացատրություններով:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.03.2001թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 7 կարգապահական վարույթ (3 ընթացիկ և 4 ավարտված վարույթ)՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 25.05.2017թ. թիվ ԿԳ/55-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի խախտման համար և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 17.10.2017թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման համար և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 17.01.2018թ. թիվ ԿԳ/02-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողության ձևով: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/101-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար և նրա նկատմամբ կիրառվել է

⁸ <http://yn.am/?index&p=87186&l=am>

⁹ <https://shabat.am/am/article/181097/Tigran-Atanesyani-u-aktivistneri-hayhoyakharn>

կարգապահական տույժ՝ նկատողության ձևով: Որոշումն ուժի մեջ մտած չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

«Վաստաբանների պալատի խորհուրդը գտնում է, որ վաստաբան Տիգրան Աթանեսյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Պալատի խորհուրդը, նախքան փաստաբան Տիգրան Աթանեսյանի վարքագծին գնահատական տալը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել վաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք վաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում:

7.1.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել վաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել վաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել, որպես օրենքով նախատեսված սահմանափակում, որը հետապնդում է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում, նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված վաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՛ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ **դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի¹⁰ 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով¹¹:**

¹⁰ Հունգարիայի վաստաբանության վերաբերյալ օրենք:

¹¹ Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները:*

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով.

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **այլոց պատվի ու բարի համբավի** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Այդպիսի կարգավորում ունի նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի¹² 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:***

¹² Այսուհետ՝ Կոնվենցիա

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյո՞ք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՛ ոչ:

ա) «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.01.2015թ. որոշմամբ¹³ բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված **«որոնք նախատեսված են օրենքով»** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս փաստաբանական պալատը պատասխանատվության է ենթարկել արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Փաստաբանական պալատն ըստ էության գտել է, որ դիմողն իր արտահայտությամբ խախտել է էթիկայի կանոնը: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյո՞ք Պալատը փաստաբանի արտահայտվելու ազատությունը Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանափակելով՝ իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՛ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 4) *վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.* 5) *միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ:* Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ փաստաբանների պալատի խնդիրներից է բարձր պահել փաստաբանության հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը, դրանով իսկ ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

¹³ Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Անհրաժեշտ հավասարակշռության հարցը որոշվում է՝ հաշվի առնելով, թե արդյոք կիրառված միջոցը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ, որն էլ նշանակում է, թե արդյոք կիրառվել է վերաբերելի ու բավարար միջոց, թե արդյոք առկա է ռացիոնալ կապ միջոցի ու նպատակի միջև: Այսպիսով, իրավունքին միջամտող միջոցը պետք է խստորեն անհրաժեշտ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար:

Վերը նշվածին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *Փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ¹⁴:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև **Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի¹⁵ կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի»***

¹⁴ St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

¹⁵ Այսուհետ՝ CCBE

դրույթները:

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝ **նպաստել Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, եվրոպական իրավական սրանդարտների և ավանդույթների արմատավորմանը:***

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահողների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը¹⁶:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները **սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը**»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում

¹⁶ St'u CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պարզի ու բարի համբավի պաշտպանության համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պարտասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության, որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի կողմից պատասխանատվություն կրելը, չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ, եթե փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում, նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար, վստահորդը պետք է դիմի դատարանին:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել, թե արդյոք Պատասխանողի արարքը հակասում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին, թե՛ ոչ:

7.2 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման մասով.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի և Պալատի կանոնադրության իրավադրույթներին: Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքի պարզումն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի և, մասնավորապես, դրա 2.2.3 ենթակետի շրջանակներում Պատասխանողի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի նշված ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ բնույթի պարտավորության դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան

գործունեությունն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Նշվածի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե՛ այլ ոլորտներում: Ուստի՝ **փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ**, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ, ուստի՝ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Վերը շարադրված սկզբունքները սահմանված են Վարքագծի կանոնակարգով, դրանք նախկինում կիրառվել են բազմաթիվ կարգապահական որոշումներում, որոնք հրապարակվել են ու բազմիցս քննարկվել իրավաբանների համայնքում, հետևաբար, դրանց բովանդակությունը և կիրառությունը որոշակի են ու կանխատեսելի:

Կարգապահական գործի նյութերով և Դիմողի բացատրությամբ Խորհուրդը հաստատված է համարում Պատասխանողի կողմից հայիոյանքների, ժարգոնային և վիրավորական բառապաշարի օգտագործումը հրապարակային հարթակներում, մասնավորապես՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, Ազատություն ռադիոկայանում, ինչպես Դիմողի, այնպես էլ՝ այլ օգտատերերի նկատմամբ: Նման բառապաշարի օգտագործումը հարիր չէ փաստաբանի հանրային կարգավիճակ ունեցող անձին: Պատասխանողի այդպիսի վարքագծի հետևանքով խաթարվում է նաև փաստաբանության ինստիտուտի հեղինակությունն ու բարի համբավը, ինչի մասին են վկայում, մասնավորապես, Պալատի տրամադրության ներքո գտնվող՝ Պատասխանողի ան պարկեշտ գրառմանը և «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարով ֆեյսբուքյան օգտատերերի՝ Պատասխանողին ուղղված ռեպլիկներն ու հարցերը:

Խորհուրդն անդրադառնալով սույն կարգապահական գործով կարգապահական վարույթ հարուցելու որոշմամբ բարձրացված հարցերին՝ արձանագրում է, որ Տիգրան Աթանեսյանի կողմից հայիոյախառն գրառումներին նախորդել է Դիմողի կողմից հետևյալ արտահայտությունը՝ *Ճշմարտությունը մի բանա էս պարագայում.. որ ինքը ցուցարարա*

ծեծել ու դրա համար պեղքա պատասխան տա.. մարդկային հատկանիշները ընգնում են Տրդ պլան.. մերսի հրավերի համար, բայց մեծ հաճույքով մերժում եմ...: Խորհուրդը գտնում է, որ Դիմողի քննադատական բնույթի այս արտահայտությանը տեղավորվում է ազատ խոսքի թույլատրելի շրջանակներում, որոնց Պատասխանողը կարող էր այլ եղանակով արձագանքել կամ նույնիսկ չարձագանքել:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի՝ «Շատ կարգին մարդ, լավ քաղաքացի, ցավոք, առայժմ մեղադրյալ անհիմն մեղադրանքով, Մասիսի քաղաքացի Դավիթ Համբարձումյանի հետ իմ գրասենակում» արտահայտությունը հասարակության մոտ կարող էր տպավորություն առաջացնել, որ փաստաբանն իրեն նույնացնում է վստահորդի հետ:

Սույն որոշման 5-րդ կետում նշված ապացույցներով հաստատված է փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից հայիոյանքների, ժարգոնային և վիրավորական բառապաշարի (*Vilen Gaifejian դե սիկրիո եղի, այ դիշովկա, Բ...ի¹⁷ տղա, ընտանիքի գերեզմաններին թքեմ, պոռնիկը քո մերնա, այ գ...ի¹⁸ տղա ֆեյք, սքրինշոթ արա, թող քո նման բ...ի¹⁹ տղերքը տարածեն, տո այ բ...ի²⁰ տղա*) օգտագործման փաստը հրապարակային հարթակներում, ինչպես նաև կատարված հայիոյանքները և վիրավորական գրառումները արդարացնելու և հրապարակային հարթակում վիրավորական կեցվածքը շարունակելու վարքագիծը (*էդ մարդուն, ով որ վիրավորել էր իմ նախնիներին, ավելի վատ բան էլ կգրեի, ավելի վատ բան էլ կանեի: Ստեղ արդեն ինչ որ տղայություն չի, ես էլ ոգևորված չեմ, բայց իմ նախնիներին, իմ ծնողներին վիրավորողին կասեմ շատ ավելի վատ բաներ ու ասում եմ, Ինչ վերաբերվում է իմ կողմից հայիոյանքներ գրելուն կամ ինչ-որ մարդկանց պատասխանելուն՝ ես այդ պահին փաստաբան չեմ, ես սովորական քաղաքացի Տիգրան Աթանեսյանն եմ և դրա իրավունքը առավել քան ունեմ... Դա անձնական խնդիր է ու ոչ մեկի շան գործը չէ ես ինչ պարտքեր ունեմ...), որոնք Պալատի խորհուրդը գնահատում է, որպես Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների **ակնհայտ կոպիտ խախտում**:*

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողն իր վարքագծով ոչ միայն չի նպաստել փաստաբանության ինստիտուտի հեղինակության բարձրացմանը, այլև ստվերել է փաստաբանի իր կարգավիճակը և անվանարկել փաստաբանության ինստիտուտի կոչումն ու հեղինակությունը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ օգտատերերի կողմից փաստաբան Տիգրան Աթանեսյանի հասցեին էլ են վիրավորանքներ և հայիոյանքներ հնչել, ինչը Պալատի Խորհուրդն անթույլատրելի է համարում և դատապարտում է: Պալատի Խորհուրդը նշում է, որ փաստաբանը նույնպես հասարակության անդամ է, զգացմունքներ ունեցող մարդ, հետևաբար օգտատերերի կամ քաղաքացիների կողմից փաստաբանի հասցեին հայիոյանքներ տալու դեպքում վերջինիս կողմից ռեֆլեքսորեն նույն կերպ արձագանքելու վարքագիծը, Պալատի Խորհուրդը կարող էր գնահատել մեղմացնող տեսակետից: Մինչդեռ, գործի փաստերից հետևում է, որ Տիգրան Աթանեսյանը շարունակական վարքագիծ է դրսևորել, իսկ հետո փորձել էր

¹⁷ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

¹⁸ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

¹⁹ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

²⁰ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

արդարացնել նույն վարքագիծը՝ կրկին վիրավորական և հեզնական խոսքերով, ինչն ամբողջության մեջ չի կարող արդարացնել Տիգրան Աթանեսյանին: Պալատի խորհուրդը չի կարող անտեսել նաև այն փաստը, որ փոխադարձ վիրավորանքները սկիզբ են առել Տիգրան Աթանեսյանի կողմից Դիմողի քննադատությանը վիրավորանքով պատասխանելուց:

Պալատի խորհուրդը նշում է, որ Կանոնագիրքը տարածվում է փաստաբանների մասնագիտական և հանրային կյանքի նկատմամբ, ինչը բխում է նաև սույն որոշման 7.1.2 ենթակետի «գ» պարբերության մեջ նշված փաստարկներից: Որոշ երկրներում, Կանոնագրքի սահմանները տարածվում են նաև փաստաբանի անձնական կյանքի նկատմամբ: Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Աթանեսյանի՝ հրապարակային հարթակներում դրսևորած վարքագիծը կարող է քննարկվել Կանոնագրքի սահմաններում: Հատկանշական է, որ նշված «խնդիրը» ծագել է Տիգրան Աթանեսյանի փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքից:

7.3. Խորհրդի կողմից կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցը

Օրենքի 39.9 հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.....5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

2. Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

5. Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի Խորհրդի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատի Խորհուրդն իրավասու է կիրառել կարգապահական փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, ինչպես նաև որպես փաստաբանի ազատության և անկախության երաշխիք Պալատի Խորհրդին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի

դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում թույլ տալու դեպքում:

Օրենքով Պալատի Խորհրդին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Խորհուրդը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ: Բնականաբար, փաստաբանի վարքագծի որակման գործառույթի շրջանակներում Խորհուրդն արարքի հակաիրավականության աստիճանը ծանրացնող հանգամանքների առկայության պարագայում կարող է այն որակել որպես ակնհայտ կոպիտ:

Մասնավորապես, Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով Խորհուրդը փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվում է համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Խորհուրդը նաև հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող վերոհիշյալ հանգամանքներին:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Օրենքի 39.9 հոդվածի 5-րդ մասով Պալատին իրավունք է տրվում փաստաբանի գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնել, եթե նրա կողմից կատարվել է դիտավորյալ ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Պատասխանողի կողմից 03.06.2018թ. իր Ֆեյսբուքյան էջում հրապարակայնորեն մի շարք անձանց և այդ թվում Դիմողին հայհոյելը: Պալատը գտնում է, որ Պատասխանողի մեղքի աստիճանի վրա ազդում են նաև 05.06.2018թ. «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարում հանդես գալիս իր կողմից դրսևորված անպարկեշտ վարքագիծն արդարացնելը, դրա ճշմարտացիությունը պնդելը, այդպիսով առհամարիելով և անտեսելով բարոյական նորմերի արժեքավորման հասարակական պատկերացումները: **Պալատի Խորհուրդը գտնում է, որ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:**

Սույն գործի փաստերից, հատկապես «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարում Տիգրան Աթանեսյան հետևյալ խոսքից՝ *Լավ չի, տղայական է մի քիչ, միգուցե պետք չէր, բայց պետք էր: Էդ մարդուն, ով որ վիրավորել էր իմ նախնիներին, ավելի վատ բան էլ կգրեի, ավելի վատ բան էլ կանեի*, որով վերջինս փորձել է արդարացնել իր վարքագիծը, Պալատի Խորհուրդը եզրակացնում է, որ Տիգրան Աթանեսյանի արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն՝ վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Եվրոպական դատարանը գտնում է, որ խոսքի այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են անվայել և անպարկեշտ հայտարարությունները, չեն հանդիսանում գաղափարներ արտահայտելու կարևոր տարրերից մեկը: Վիրավորական արտահայտությունները կարող են դուրս ընկնել խոսքի ազատության պաշտպանության սահմաններից, եթե դրանք հետապնդում են միմիայն վիրավորելու նպատակ, եթե դրանք արվել են անձին արատավորելու չարամիտ դիտավորությամբ (*Ռուջակն ընդդեմ Խորվաթիայի* (որոշ.), թիվ 57942/10, կետ 30): Վերոնշյալի համատեքստում Պալատը գտնում է, որ Պատասխանողն իրեն մեղսագրվող արարքը կատարել է դիտավորությամբ և կատարվածի համար չի զղջացել:

Կարգապահական խախտման հետևանքները

Պալատը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողն իրեն մեղսագրվող արարքը կատարել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում, որը բաց է ոչ միայն Պատասխանողի բազմահազար «ընկեր» հանդիսացող օգտատերերի, այլև անորոշ թվով այլ օգտատերերի համար: Պատասխանողի մասնակցությամբ միջադեպի և Պատասխանողի վարքագծի մասին հրապարակումներ են հայտնվել մի շարք լրատվամիջոցներում: Սույն փաստերը վկայում են այն մասին, որ լայն հասարակությունը տեղեկացել է փաստաբան Տիգրան Աթանեսյանի անվայել պահվածքի մասին, ինչը, անշուշտ, բացասաբար է ազդել փաստաբանության ինստիտուտի հանրային վարկանիշի և բարի համբավի վրա: Պատասխանողի վարքագծի հետևանքով արատավորվել է Դիմողի և մի շարք այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը:

Պալատը գտնում է, որ վերոնշյալի համատեքստում Պատասխանողի վարքագծի հետևանքով տուժել է փաստաբանական համայնքի և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն ու բարի համբավը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա փուլերը

Պատասխանողն աչքի չի ընկնում իրավաչափ և էթիկապես կոռեկտ վարքագծով: Պալատի վարույթում, չհաշված սույն վարույթը, առկա է ևս 7 գործ, որտեղ Տիգրան Աթանեսյանը հանդես է գալիս որպես պատասխանող: Ընդ որում, երկու ավարտված վարույթով Պատասխանողը Խորհրդի կողմից պատասխանատվության է ենթարկվել այլ անձանց և փաստաբանի նկատմամբ փաստաբանին ոչ վայել վարքագիծ դրևորելու, այսինքն՝ սույն գործի շրջանակներում հաստատված վարքագծին համանման արարքի կատարման համար: Եվս մեկ վարույթով Պատասխանողը կարգապահական տույժի է ենթարկվել վստահորդին ոչ բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու համար:

Պալատի Խորհրդի վերոհիշյալ որոշումներն ուժի մեջ մտած չեն, հետևաբար Պալատի խորհուրդը դրա իրավական հետևանքները չի տարածում Տիգրան Աթանեսյանի՝ սույն դեպքի նկատմամբ:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը դրևորել է շարունակական հակաիրավական և փաստաբանական էթիկային հակասող վարքագիծ, որն ստացել է բազմակիության բնույթ, այդ թվում՝ սոցիալական ցանցում և ֆեյսբուքյան ասուլիսի ընթացքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյեկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝ հավաստելու համար, որ վերջինիս կատարած արարքը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, իսկ Պատասխանողի մեղքի բնույթն ու աստիճանը և անձը բնութագրող հանգամանքները հիմք են նրա նկատմամբ կիրառելու «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժը: Սույն գործի հանգամանքները վկայում են նաև այն մասին, որ առկա է համաչափություն Խորհրդի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև:

Ամփոփելով վերոգրյալը, Պալատի խորհուրդը գտնում է, որ Տիգրան Աթանեսյանը դիտավորյալ թույլ է տվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների կոպիտ խախտում: Այս պայմաններում, Պալատի խորհուրդը ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 5-րդ մասի պահանջով առ այն, որ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում, փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ նշանակում է արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.7-րդ և 39.9-րդ հոդվածների, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, ինչպես նաև Կարգի 30-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Աթանեսյանին (արտոնագիր՝ թիվ 78) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:
2. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ (արտոնագիր թիվ՝ 78) կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում (ուժը կորցրած ճանաչելով թիվ 78 արտոնագիրը):
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/195-Ա
ք. Երևան